№ 8 (12)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

ЕРЕВАН 2021

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

8 (12)

ԵՐԵՎԱՆ 2021
ЕРЕВАН 2021
YEREVAN 2021

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №8 (12). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2021. – 242 с.

ISSN 1829-4820

Журнал входит в список периодических изданий ***ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© *Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване*

Հասցե՝ ՀՀ, Երևան, Վարդանանց 17, հեռ՝ (+37411) 900 110 – 101, 102:
Наш адрес: РА, г. Ереван, ул. Вардананц 17; тел. (+37411) 900 110 – 101, 102.
Address: Vardanants St. 17, Yerevan, RA; tel.: (+37411) 900 110 – 101, 102.
Էլեկտրոնային փոստ՝ (электронная почта) e-mail: po@msu.am

ИСПОЛЬЗОВАНИЕ ГРАФИЧЕСКИХ ОРГАНИЗАТОРОВ В ПРОЦЕССЕ АНАЛИЗА ИНОЯЗЫЧНОГО ТЕКСТА

Рузанна Эдвардовна Геворгян
ruzanna.gevorgyan84@gmail.com

Ассистент кафедры № 1 английского языка,
факультета европейских языков и коммуникации
Ереванский государственный университет,
Ереван, Республика Армения

Лусине Арменовна Саргсян

Преподаватель кафедры № 1 английского языка,
факультета европейских языков и коммуникации
Ереванский государственный университет,
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

В статье показано, что анализ текста на иностранном языке требует соответствующего уровня языковых, лексико-стилистических знаний, а также умения работать с современными интерактивными методами и приемами. Обоснована эффективность использования графических организаторов при анализе текста, так как использование графических организаторов повышает уровень вовлеченности студентов, помогает им свободно мыслить, что является основой любой аналитической деятельности.

Ключевые слова: графический организатор, профессиональный текст, концептуальная карта, литературный анализ, филологический анализ, интерактивный, художественный текст, методический прием.

Օտարալեզու տեքստի շուրջ աշխատանքի ընթացքում լայնորեն կիրառվում են գծագրական դասակարգիչներ: Համապատասխան գրականության վերլուծությունը ցույց է տալիս (Առնաուդյան, Գյուլբուդաղյան Խաչատրյան [1], DeMeo [2: 540–546], Dye [3: 72–76], Fisher [4: 116–120], Hawk [5: 81–87], Kim, Vaughn, Wanzek, Wei [6: 105–118], Robinson, Katayama, Beth, Odom, Hsieh, & Vanderveen [7: 103–111), որ դեռևս նախորդ դարի 70-ական թվականներից մեթոդիստները մշակել են մեծ քանակությամբ գծագրական (graphic) կամ իմաստաբանական դասակարգիչներ (semantic organizers), որոնք լայնորեն կիրառվում են գեղարվեստական և ոչ գեղարվեստական, լրագրական, գիտական, տեխնիկական և այլ բնույթի տեքստերի վերլուծության ընթացքում:

Անգլերենի մասնագիտական կողմնորոշման դասընթացում (ESP), անգլերենի ուսուցման լսարանային ժամերի սղությունը որոշակի դժվարություններ են առաջացնում: Ուսանողները սիրով ընթերցում են օտարալեզու մասնագիտական տեքստեր և հիմնականում փորձում են թարգմանել: Գծագրական դասակարգիչների կիրառումը հնարավորություն է ընթեռում դասերը դարձնել փոխներգործուն: Տարբեր զուգորդումների միջոցով ուսանողներն ավելի լավ են յուրացնում ուսումնական նյութը:


Արդյունավետ է, երբ ուսանողները ինքնուրույն ուսումնասիրում են գծագրական դասակարգիչները, ուսումնասիրելով գծագրական դասակարգիչների մասին համապատասխան գրականություն հայերեն և անգլերեն լեզուներով: Անգլերենով գիտամեթոդական հոդվածների ընթերցանությունը նույնպես ներկայացնում է որոշակի, հիմնականում եզրույթաբանական բնույթի դժվարություններ: Որոշ ընթացակարգերի պարզաբանումը կարևոր է, քանի որ ուսանողները հիմականում չունեն գծագրական դասակարգիչների կիրառման փորձ: Անգամ T-աձև աղյուսակի օգտագործումը կարող է դժվար թվալ, չնայած խնդիր է դրվում համեմատել միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը: «Սա գծագրական դասակարգիչներից ամենապարզն է և՛ կազմակերպական ձևով, և՛ կա-

ռուցվածքով: Այն, ինչպես նախորդ ձևերը, կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Իր ձևով T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը» [1]:




Ուսանողներին առաջարկվում է որևէ տեքստ ընթերցելուց հետո համեմատել նույն հերոսների դրական և բացասական կողմերը, կամ տարբեր հերոսների դրական բացասական կողմերը:

Հաջորդ փուլում ավելի բարդ գծագրական դասակարգիչ է առաջարկվում կիրառել: Ուսանողները փորձում են կիրառել m-աձև աղյուսակ: Ըստ այդ աղյուսակի՝ ուսանողները երեք տարբեր վերաբերմունք (դրական, բացասական, չեզոք) են արտահայտում:




Տեքստերի վերլուծության ընթացքում արդյունավետ է կիրառել հասկացությունների քարտեզ (concepts map): Ուսանողներին առաջարկվում է ընթերցել Վիլյամի Սարոյանի «Պ» պատմվածքը: Ուսանողները շրջանի մեջ են առնում պատմվածքի այն հանգուցային բառ/եր/ը և առնչվող բառերն ու գաղափարները: Օրինակ՝ «Առաջին օրը դպրոցում» /The first day of school/ պատմվածքը ընթերցելուց հետո, ուսանողները առանձանցում են այն բառերը, որոնք վերաբերում են հերոսի հոգեվիճակին:



Վենի դիագրամի միջոցով ուսանողները կարող են համեմատել հերոսներին, նրանց մոտեցումները, մտքերը, հոգեվիճակները, բացահայտել դրանց ընդհանրությունները և տարբերությունները: Կարելի է համեմատել Ջիմի և տնտեսուհու զգացմունքները կամ մտքերը, բացահայտել դրանց նմանությունները և տարբերությունները Վենի դիագրամայի միջոցով [1: 47]:

Նկար 1.



Հաջորդ փուլում ուսանողները դուրս են գրում համեմատվող կերպարների ընդհանրությունները և տարբերությունները:

Քառաբաժանը նույնպես արդյունավետ գծագրական դասակարգիչ է և կիրառվում է հատկապես տեքստի վերլուծության և վերլուծության ուսուցման ժամանակ: Այն նույնպես կիրառվում է մեծ կամ փոքր խմբերով: Ինչպես հայտնի է, այն հիմնականում գրավոր աշխատանքի ձև է: Սովորողները ըստ առաջադրանքի գրառում են իրենց մտքերը նախապես առանձնացրած չորս բաժնում:

Կարելի է հանձնարարել, որ սովորողներն ընթերցեն տվյալ պատմվածքը, հետո որևէ վերլուծական հոդված այդ պատմվածքի մասին: Հաջորդ փուլում նրանք լրացնում են առանձնացրած բաժինները ըստ նախօրոք մշակված հարցերի: Օրինակ՝ նրանք ընթերցում են Ուիլյամ Սարոյանի «Դաշնամուր պատմվածքը», հետո ոճաժանրային որևէ վերլուծություն ներկայացնող հոդված, տեքստ անգլերենով: Դա հեշտացնում է ուսանողների աշխատանքը: Նրանք հեշտությամբ են ներկայացնում հերոսների հույզերը, զգացմունքները, մտքերը, կարծրատիպերը, սովորույթները, դիրքորոշումները, հոգեվիճակը և այլն, երբ մինչ ընթերցումը կամ ընթերցման ընթացքում ուսումնասիրում են անգլերենով լույս տեսնող որոշակի գրականագիտական-վերլուծական գրականություն:

***Piano* by William Saroyan**

Text Analysis

Saroyan, William (1908–1981) was a successful playwright. The eccentric, spirited author was born in Fresno, California, where his Armenian parents were fruit farmers and where he worked at odd jobs before gaining fame as a short story writer. He came to playgoers' attention with *My Heart's in the Highlands* but became famous with his much lauded *The Time of Your Life*, which won the Pulitzer Prize, although Saroyan noisily rejected it. His later works included *Love's Old Sweet Song* (1940); *The Beautiful People*; *Across the Board on Tomorrow Morning* and *Talking to You*; *Hello, Out There*; *Get Away Old Man*; and *The Cave Dwellers*. Wolcott Gibbs called the writer “the most completely undisciplined talent in American letters,” and Brooks Atkinson, in a preface to Saroyan's public-

shed plays, noted, “When he writes out of general relish, usually in isolated scenes, [he] is at his best and made a definite contribution to the mood of these times, [but] when he permits himself to discuss ideas he can write some of the worst nonsense that ever clattered out of a typewriter” [9: 108].

Ուսանողների տրվում են հետևյալ հարցերը.

Ինչ եք տեսնում, զգում, մտածում պատմվածքը ընթերցելիս: Նրանք փորձում են հասկանալ գործողությունների ենթատեքստը, կապել իրենց անձնական կյանքի, կենսակերպի հետ: Կարևոր է, որ նրանք առաջարկեն իրենց վերնագրերը, ամփոփեն կամ ընդհանրացնեն վերլուծության արդյունքները:

Աղյուսակ 1.

Ա)

1. Ի՞նչ էիք տեսնում պատմվածքը կարդալիս: զգայություններ • տեսողական • լսողական • զգացողական • համի և հոտի	**2. Ի՞նչ էիք զգում պատմվածքը կարդալիս:** վերաբերմունք • հույզեր • զգացմունքներ
3. Կապը ձեր և իրական կյանքի հետ: • ասոցիացիաներ • առնչություններ • օրինակներ	**4. Նոր վերնագիր:** • ընդհանրացում • վերաիմաստավորում • գնահատում

Նրանք փորձում են անգլերեն բառերով ներկայացնել այն ձայները, որ լսել են, հաղորդել պատմվածքի տրամադրությունը, առանձնացնել երկու կամ երեք հիմնաբառ և վերատադրել պատմվածքի բովանդակությունը, թեման սեփական բառերով:

Պատմվածքի ձայները ներկայացնելու համար, սովորողները դուրս են գրում տեքստից այն բառերը, որոնք օգնում են ներկայացնել այդ ձայները: Նույն ձևով նրանք փորձում են ներկայացնել պատմվածքի տրամադրությունը: Այդ փուլում կարելի է առանձնացնել տեքստում տեղ գտած ոճաարտահայտչական միջոցները՝ համեմատությունները, փոխաբերությունները, մակդիրները, կրկնությունները և այլն: Եթե բուն պատմվածքի ընթերցանությունն օգնում է սովորողներին յուրացնել համապատասխան բառապաշարը, ապա նրան վերաբերող վերլուծությունն օգնում է յուրացնել այն եզրույթները, որոնք անհրաժեշտ են անգլերենով տեքստը վերլուծելու համար: Օրինակ՝

narrative, descriptive and dialogical sequences
technique of rendering
a covert narrator
neutral voice
a fixed focalization
the third-person narrative
The simplicity of the plot
a straight-line narrative
elements of flashback
is inexplicable to the protagonist
expresses her feelings with the first chance
interlocutor's way
by means of flashback
touches upon the theme
constitutes the climax
has an open text structure
to resonate with the readers
an outer exposition of the inner state

Առանձնացված արտահայտությունների թարգմանությունը հնարավորություն է ընձեռում ամրապնդել տեքստի վերլուծության համար անհրաժեշտ բառապաշարը. կիրառել դրանք նոր տեքստեր վերլուծելիս:

Մի կողմից՝ սովորողները յուրացնում են պատմվածքում տեղ գտած նոր բառապաշարը: Մյուս կողմից՝ նրանք յուրացնում են այն վերլուծելու համար անհրաժեշտ բառապաշարը, գրականագիտական և բանասիրական վերլուծության եզրույթները:

Ավելի ինտերակտիվ բնույթ ունի խորանարդումը, քանի որ սովորողները փորձում են նկարագրել, համեմատել, զուգուրդել, վերլուծել, կիրառել և՛ թեր, և՛ դեմ փաստարկներ բերել: Մյուս առավելությունն այն է, որ սովորողներն առաջադրանքը կարող են կատարվել բանավոր կամ գրավոր: Ամեն մի ուսանող կարող է կիրառել մեկ կամ ավել խորանարդներ:

Փոխներգործուն բնույթը տվյալ մեթոդական հնարի բացատրվում է այն հանգամանքով, որ ամբողջ խումբը հաջորդաբար անդրադառնում է խորանարդի բոլոր նիստերին: Մեթոդիստները նշում են, որ այս մեթոդը նպատակահարմար է կիրառել միայն ծանոթ թեմաների քննարկման դեպքում:

Աղյուսակ 2.

Name: _____ Per._____

T.A.P.

Topic	Audience	Purpose
What am I writing about? What do I know about this topic?	Who will read what I write? What does my audience already know about the topic?	What am I writing about? What do I know about this topic?

What additional information do I need to write about this topic? Where will I find this information?	What opinions will my audience have on the topic? How will the intended audience influence what I writer and the way I write it?	What additional information do I need to write about this topic? Where will I find this information?

Ուսանողներին առաջարկվում է վերլուծել Օ՛ Հենրիի «Վերջին տերևը»: Նրանք սկզբում կարդում են այն և ընդգծում անծանոթ բառերը: Հետո ըստ «Խորանարդ» մեթոդի առաջադրանքների պատասխանում հարցերին: Պատմվածքը ներկայացնում է Ջոնսի և Սյուի ընկերության մասին է: Ջոնսին Կալիֆորնիայից է և չի դիմանում կամ հարմարվում Նյու Յորքի ցուրտ, խոնավ եղանակին: Նա հիվանդանում է թոքաբորբով: Ջոնսին ապրելու հույս չունի: Տան կենվորները իմանում են, որ նա հուսահատված է և մտածում է, եթե վերջին տերևն ընկնի, ինքը կմեռնի: Ծեր կենվոր, Միստր Բերմանը նկարում է տերև դրսի կողմից ապակու վրա: Վերջին տերևը չի ընկնում: Այն ապրելու ուժ է տալիս Ջոնսիին: Սակայն ծեր նկարիչը մրսում է և մահանում:

Ընթերցանությունից հետո ուսանողները նկարագրում են հերոսներին, նրանց ներաշխարհը, ապրած տեղանքը, նրանց հարաբերությունները: Հետո զուգորդում են, վերագրելով նրանց այս կամ այն որակները, փորձում են կապ տեսնել հեղինակների և հերոսների միջև, անել թեր և դեմ փաստարկներ:

Հաջորդ փուլում կիրառվում է «Փոխներգործուն գրառումների համակարգ /ՓԳՀ/ մեթոդը»:

Ինչպես հայտնի է, ընթերցելով տվյալ տեքստը՝ սովորողները նշումներ են կատարում՝ օգտագործելով ՓԳՀ-ի հետևյալ նշանները.

V = հաստատում է իմ իմացածը(գիտեմ)

\+ = նոր տեղեկատվություն է (չգիտեմ)

\- = իմացածին հակասում է

? = անհասկանալի է

! = հետաքրքիր է, կարելի է քննարկել

ՓԳՀ նշանների առատությունը արտահայտում է ընթերցողի ակտիվության աստիճանը և տեքստի հետ կատարած աշխատանքի արդյունավետությունը: Նյութը արդյունավետ յուրացնելու համար օգտակար է, որ յուրաքանչյուր սովորող իր համար կատարի դասակարգում և կազմի աղյուսակ հետևյալ ձևով.

V	+	-	?	!

Այնուհետև կարելի է կազմակերպել զույգերով, խմբերով մտքերի փոխանակություն, նյութի քննարկում կամ բանավեճ:

Աղյուսակի երրորդ և չորրորդ բաժինները կարելի է նաև տալ որպես հանձնարարություն՝ այլ աղբյուրներից լրացուցիչ տեղեկատվություններ քաղելու և գիտելիքները խորացնելու համար:

Տեքստի վերլուծության ուսուցման ռազմավարությունները հիմնականում ներառում են համապատասխան գծագրական դասակարգիչներ: Դրանց կիրառումը նպաստում է ուսանողների վերլուծական կարողությունների զարգացմանը:

Եզրակացություն

Օտարալեզու տեքստի վերլուծությունը պահանջում է համապատասխան լեզվական մակարդակ, բառագիտական, ոճաբանական գիտելիքներ, ինչպես նաև ժամանակակից փոխներգործուն մեթոդներով և հնարներով աշխատելու կարողություններ: Գծագրական դասակարգիչները հանդես են գալիս լայն իմաստով որպես ուսուցման մեթոդ, նեղ իմաստով, գործնական մակարդակում նրանք յուրահատուկ ուսուցման հնար են: Ուսանողը, կիրառելով այս կամ գծագրական դասակարգիչը, հնարավորություն է ստանում հնարավորինս շատ զուգորդումներ անել, շարունակաբար հարստացնել տվյալ թեմայի շրջանակներում կոնկրետ հասկացությունների իմաստային ասոցիատիվ-զուգորդական դաշտը: Գծագրական դասկարգիչների կիրառումը բարձրացնում է ուսանողների ներգրավվածության աստիճանը, օգնում է ազատ, անկաշկանդ մտածել, որը և ցանկացած վերլուծական ընթացակարգի հիմքն է կազմում:

ЛИТЕРАТУРА

1. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար / Ա. Առնաուդյան, Ա. Գյուլբուդաղյան, Ս. Խաչատրյան և ուրիշ.: – Եր.: ԿԱԻ հրատ., 2004: – 180 էջ:
2. *DeMeo S.* (2007). Constructing a graphic organizer in the classroom: Introductory students' perception of achievement using a decision map to solve aqueous acid-base equilibria problems. Journal of Chemical Education, 84(3). – PP. 540–546.
3. *Dye G.A.* (2000). Graphic organizers to the rescue! Helping students link-and remember-information. Teaching Exceptional Children, 32(3). – PP. 72–76.
4. *Fisher A.L.* (2001). Implementing graphic organizer notebooks: The art and science of teaching content. Reading Teacher, 55(2). – PP. 116–120.
5. *Hawk P.P.* (1986). Using graphic organizers to increase achievement in middle school life science. Science Education, 70(1). – PP. 81–87.
6. *Kim A., Vaughn S., Wanzek J. & Wei S.* (2004). Graphic organizers and their reading comprehension of students with LD: A synthesis of research. Journal of

Learning Disabilities, 37 (2). – PP. 105–118.
7. *Robinson D.H., Katayama A.D., Beth A., Odom S., Hsieh Y.P. & Vanderveen A.* (2006). Increasing text comprehension and graphic note taking using a partial graphic organizer. Journal of Educational Research, 100(2). – PP. 103–111.
8. *Santa C., Havens L. & Valdes B.* (2004). Project CRISS: Creating Independence through Student-owned Strategies. Dubuque, IA: Kendall Hunt.
9. *Saroyan W.* (2013) Text Analysis of the Short Story Piano by: Pages: 5 (1784 words) Published: May 7, // Text Analysis of the Short Story Piano by William Saroyan Essay – 1784 Words (studymode.com).

ԳԾԱԳՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ՏԵՔՍՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ռ.Է. Գևորգյան

ruzanna.gevorgyan84@gmail.com

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ № 1 ամբիոնի ասիստենտ,
Երևանի պետական համալսարան
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Լ.Ա. Սարգսյան

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ № 1 ամբիոնի դասախոս,
Երևանի պետական համալսարան
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում փորձ է արվում կոնկրետ տեքստերի վերլուծության օրինակներով ցույց տալ գծագրական դասակարգիչների կիրառման առանձնահատկություններն

անգլերենի մասնագիտական կողմնորոշման դասընթացում: Հիմնավորվում է գծագրական դասակարգիչների կիրառման արդյունավետությունը նախատեքստային, տեքստային, հետտեքստային վերլուծության ընթացքում: Որպես վերլուծության առարկա ընտրվել են գեղարվեստական տեքստեր, վերցրած ամերիկյան գրականությունից (Վ.Սարոյան, Օ՛ Հենրի և այլն):

Բանալի բառեր՝ գծագրական դասակարգիչ, մասնագիտական տեքստ, հասկացությունների քարտեզ, գրականագիտական վերլուծություն, բանասիրական վերլուծություն, փոխներգործուն, գեղարվեստական տեքստ, մեթոդական հնար:

USING GRAPHIC ORGANIZERS IN THE PROCESS OF ANALYZING A FOREIGN LANGUAGE TEXT

R. Gevorgyan
ruzanna.gevorgyan84@gmail.com

Assistant at the English Department № 1,
Faculty of European Languages and Communication,
Yerevan State University,
Yerevan, Republic of Armenia

L. Sargsyan

Lecturer at the English Department № 1,
Faculty of European Languages and Communication,
Yerevan State University,
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

The article shows that the analysis of a text in a foreign language requires an appropriate level of linguistic, lexical and stylistic knowledge, as well as the ability to work with modern interactive methods and techniques. The effectiveness of the use of graphic organizers in the analysis of text has been substantiated, since the use of graphic organizers increases the level of student involvement, helps them think freely, which is the basis of any analytical activity

Keywords: graphic organizer, professional text, concept map, literary analysis, philological analysis, interactive, fictional text, methodical technique.

Информация о статье:
статья поступила в редакцию 21 октября 2021 г.,
подписана к печати в номер 8 (12) / 2021 – 29.11.2021 г.